ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

- 2022 թվականի № -Ն
քաղ. Երևան

ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 5-Ի N176-Ն ԵՎ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի N383-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «ը» կետը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Սահմանել բնական գազի մատակարարման պայմանագրի օրինակելի ձևը՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությանը՝ մինչև 2023 թվականի մարտի 25-ը հանրապետական սփռման առնվազն մեկ հեռուստաընկերության միջոցով առնվազն 10-ական անգամ՝ 18:00-20:00-ն և 20:00-23:00-ն ընկած ժամանակահատվածներում, azdarar.am կայքով, ընկերության պաշտոնական կայքով, սպասարկման գրասենյակներում և փոստային բաժանմունքներում ապահովել սույն որոշման 1-ին կետով հաստատված պայմանագրի օրինակելի ձևի և դրան համապատասխան պայմանագրերի փոփոխման՝ սույն որոշման 3-րդ կետով ամրագրված կարգավորման մասին բաժանորդների իրազեկումը:
3. Սահմանել, որ եթե բաժանորդը մինչև 2023 թվականի ապրիլի 1-ը գրավոր չի դիմում «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությանը՝ լուծելու իր հետ կնքված բնական գազի մատակարարման պայմանագիրը, և նույն ամսաթվից շարունակում է բնական գազի փաստացի սպառումը, այդ պայմանագիրը

համարվում է փոփոխված սույն որոշման 1-ին կետով սահմանված՝ բնական գազի մատակարարման պայմանագրի օրինակելի ձևին համապատասխան:

4. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի՝

1) 2013 թվականի հունիսի 5-ի «Բնական գազի մատակարարման (մատակարար-բաժանորդ (կազմակերպություն)) պայմանագրի օրինակելի ձևը հաստատելու մասին» №176-Ն որոշումը,

2) 2) 2014 թվականի հոկտեմբերի 15-ի «Բնական գազի մատակարարման (մատակարար-բաժանորդ (բնակիչ)) պայմանագրի օրինակելի ձևը սահմանելու մասին» №383-Ն որոշումը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2023 թվականի ապրիլի 1-ից, իսկ դրա 2-րդ և 3-րդ կետերը՝ 2023 թվականի մարտի 17-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
- 2022թ.